

12. Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասներ*

2002թ. տարեվերջի դրությամբ ՀՀ ոստիկանության կողմից հաշվառվել է 111 մուրացիկ և թափառաշրջիկ անչափահաս (90.1%-ը՝ միակողմանի ծնողազուրկ), նրանցից 37-ը՝ աղջիկ:

Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների սեռատարիքային կազմն ըստ մարզերի, 2002թ.

(մարդ)


	Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների թվաքանակը		այդ թվում՝ ըստ տարիքի		
	ընդամենը	նրանցից՝ աղջիկներ	մինչև 14 տարեկան	14-15 տարեկան	16-18 տարեկան
ք.երևան	39	9	11	17	11
Արագածոտն	-	-	-	-	-
Արարատ	15	4	5	7	3
Արմավիր	1	1	1	-	-
Գեղարքունիք	8	2	3	4	1
Լոռի	22	15	11	10	1
Կոտայք	6	2	2	4	-
Շիրակ	12	4	10	1	1
Սյունիք	2	-	2	-	-
Վայոց ձոր	-	-	-	-	-
Տավուշ	6	-	1	3	2
Ընդամենը ՀՀ	111	37	46	46	19

Հաշվառված մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների հետ իրականացվում են անհատական նախազգուշական (պրոֆիլակտիկ) աշխատանքներ, պաշտոնապես զգուշացվում են վերջիններիս ծնողները: Անչափահասները ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ստորաբաժանումներում վերցվում են պրոֆիլակտիկ հաշվառման: Նրանց նկատմամբ հետագա վերաբերմունքը ճշտելու նպատակով այդ երեխաներին ուղարկում են Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան գրասենյակի «Երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոն», որտեղ համապատասխան ուսումնասիրություններից հետո հանձնում են ծնողներին կամ ուղարկում են համապատասխան ուսումնական հաստատություններ, այդ թվում ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիր և Երևանի թիվ 18 հատուկ դպրոց:

Կատարված աշխատանքների արդյունքում վերջին տարիներին էապես նվազել է մուրացկանությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների թվաքանակը:

* Տեղեկատվությունը տրամադրել է ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչությունը:

Մուրացիկ և թափառաշրջիկ անչափահասների թվաքանակը, 1997-2002թթ., մարդ



ՀՀ ոստիկանության կողմից անչափահասների շրջանում մուրացկանության և թափառաշրջիկության կանխման ուղղությամբ իրականացվող աշխատանքներում հատուկ ուշադրություն է դարձվում նաև անչափահասներին մուրացկանության մեջ ներգրավող չափահաս անձանց հայտնաբերման և օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության ենթարկելու աշխատանքներին: Այս ուղղությամբ ՀՀ ոստիկանության կողմից կատարված ուսումնասիրությունները և վերլուծությունները ցույց են տվել, որ անչափահասները մուրացկանության և թափառաշրջիկության մեջ ներգրավվում են հիմնականում իրենց իսկ ծնողների կամ նրանց փոխարինող այլ անձանց (ընտանիքի չափահաս անդամների և մերձավոր ազգականների) կողմից, որը դժվարություններ է առաջացնում երևույթի կարգավորման հարցում: Այսպես, 2002թ. հայտնաբերվել և անչափահասներին մուրացկանության մեջ ներգրավելու համար օրենքով սահմանված կարգով քրեական պատասխանատվության է ենթարկվել 7 չափահաս մարդ, որոնցից 6-ը եղել են ծնողները (մեկը՝ հայր, հինգը՝ մայր), բոլորն էլ՝ գործազուրկ: